

Ապագայ

ISSN 0382-9251

AIBAIKA

HÉBDOMADAIRE CANADIEN ARMÉNIEN

VOL. VI No. 272 SAMEDI 31 JANVIER 1981

ՏԱՐԻ Զ, ԹԻԻ 272, ՇԱՐԱԹ 31 ՅՈՒՆՈՒԱՐ 1981

ԱԶԳԱՅԻՆ, ՄՃԱԿՈՒԹԱՅԻՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

Գերսամ Ահարոնեան Ոչ եւս է



Պէյրուսի հեռաձայնային հաղորդակցութեան մը խորունկ ցաւով տեղեկացանք վաղահաս մահուան գոյժին, «Ձարթօնք» օրաթերթի երկարամեայ խմբագրապետ՝ Գերսամ Ահարոնեանի, որ տեղի ունեցած է Երեքշաբթի, Յունուար

20, առաւօտեան ժամը 1.30-ին, իր բնակարանին մէջ: Յուդարկաւորութեան տըխուր արարողութիւնը տեղի ունեցած է Հինգշաբթի, Յունուար 22-ին:

Գերսամ Ահարոնեան հայ Սփիւռքի ամենակարկառուն մտաւորական ղէմքերէն մին

եղած է: Ան վարած է ՀԲԸՄ-ի կրթական ծրագրերն ու վերին պատասխանատու պաշտօններ, եղած է Թէքէեան Մշակութային Միութեան Հիմնադիրներու անդամ, Ռամկավար Ազատական կուսակցութեան գերագոյն մարմնի ղեկավարներէն, եւ հեղինակած է ազգային-պատմական եւ քաղաքական հմուտ վերլուծումներու երկար շարք մը:

Հանգուցեալը եղած է ջերմ հայրենասէր մը եւ էջմիածնասէր մը, ու խոր հաւատքով լծուած է Հայրենիք-Սփիւռք կապի ամրապնդման գործին:

Երկու ամիս առաջ ան ներկայ եղած էր, Երեւանի մէջ Հայաստանի 60-ամեակին առթիւ կատարուած փառահեղ հանդիսութիւններուն:

Պիտի անդրադառնանք Գերսամ Ահարոնեանի անկորնչելի վաստակին եւ ազգային-հասարակական ու մտաւորական բեղուն ծառայութիւններուն մասին:

Սիւզի Մահաէրէնեանի Դատավարութիւնը Ժրնեւի Մէջ

Յունուար 13-ին, ժրնեւի մէջ, տեղի ունեցաւ Սիւզի Մահաէրէնեանի դատավարութիւնը: որուն արձագանգ հանդիսացան Ֆրանսայի, Զուիցերիոյ, Իտալիայի եւ Եւրոպայի այլ երկիրներու բազմաթիւ թերթեր:

Սիւզի Մահաէրէնեան մէկն էր այն երկու անձերէն, որոնք քանի մը ամիս առաջ ձերբակալուեցան ժրնեւի պանդոկի մը սենեակին մէջ, ձեռնառումբի մը անակընկալ պայթումէն ետք: Միւս անձը, Արա Ենիգոմշուեան լրջօրէն վիրաւորուած է, կորսնցնելով իր տեսողութիւնն ու մէկ թերթ: Ենիգոմշուեանի դատավարութիւնը տակաւին տեղի չէ ունեցած:

Սիւզի Մահաէրէնեանի դատավճիռն էր 18 ամսուան բանտարկութիւն (հինգ տարուան յետաձգումով) եւ 15 տարուան Զուիցերիայէն արտաքսում: Դատավարու-

թեան ընթացքին, ամերիկահայտակ նախկին պէյրուսի մանկամարդուհին յայտնած է, թէ Պէյրուսի այցելութեան միջոցին, լիպիացիներու կողմէ հարցաքննութեան ենթարկուած է եւ ի վերջոյ հայ մը, առաջարկած է ազատել զինք այդ կացութեան, եթէ օժանդակէ Հայ Ազատագրութեան Գաղտնի Բանակին: Օր. Մահաէրէնեան ըսած է, թէ իր գործունէութիւնը սահմանափակուած էր միայն Գաղտնի Բանակին համար դրամ հաւաքելու մէջ, եւ թէ ումբեր պատրաստելու մէջ ինք մեղսակցութիւն չունէր: Մանրամասնօրէն ներկայացուած են, ժրնեւի մէջ հայէ մը, 20 հազար Ֆրանք սպառնալիքի տակ առնելու պարագաները:

Սիւզի Մահաէրէնեան արդէն իսկ մեկնած է Միացեալ Նահանգներ, առաջժ ազատ արձակուած ըլլալով:

«Հարգ» Մշակ. Ռատիօն Կը Ծիւղաւորէ Իր Չայնասփոումները

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Արեւմտեան Մասնաճիւղը, գործակցութեամբ «ՀԱՐԳ»-ի (HARC = Heritage of Armenian Culture) պիտի ունենայ իր ռատիօյի յայտագիրը Լոս Անճելըսի մէջ, ամէն կիրակի, Public Radio KPCC-FM 89ի կայանէն: Բարեգործական Արեւմտեան չրջանի տնօրէն Բարսեղ Գարթալեան, Հ. Բ. Ը. Միութեան Լոս Անճելըսի կեդրոնին մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտարարեց որ՝ ձայնասփոումները սկսան Յունուար 4, 1981ին: Մանուցման ատեն Պր. Գարթալեանի կողքին կը գտնուէին «ՀԱՐԳ»-Ռատիօյի յայտագիրներու հիմնադիր եւ վարիչ Պր. Երուանդ Ազատ-

եան ու KPCC ռատիօ հաղորդումներու տնօրէն Տոքթ. Ճան Ֆ. Կրեկըրին:

Պր. Երուանդ Ազատեանի զլխաւորած «ՀԱՐԳ» անգլերէն լեզուով ռատիօ յայտագիրները կը պատրաստուին Շարլին Աբիկեանի կողմէ, ձայնագրումներու ճարտարապետ Րոն Մինասեանի թեքնիք օժանդակութեամբ: Գործը ֆինանսաւորողն է Ալեք եւ Մարի Մանուկեան Հիմնարկը:

Լոս Անճելըսի ռատիօ-ունկնդիրներուն օգտակար հանդիսանալու դիտաւորութեամբ, Հ. Բ. Ը. Միութեան Ալեք Մանուկեան Մշակութային Հիմնադրամի ատենապետ Երուանդ Ազատեան շփման մէջ մտաւ Հ. Բ. Ը. Միութեան Արեւմտեան չրջանի տնօրէն Բարսեղ Գար-

թալեանի հետ, անոր պարզելով իր ծրագիրը: Այս վերջինս սիրով ընդառաջեց Պր. Ազատեանի փափաքին, եւ փութով կարգադրեց Փենսիւնա Սիթի Գուէնթի KPCCի եռանդուն վարիչ Տոքթ. Ճ. Ճան Կրեկըրիի հետ հանդիպումը Բարեգործականի կեդրոնին մէջ, որ իրականութիւն դարձուց Լոս Անճելըսի «ՀԱՐԳ»-ի ծրագիրը:

«ՀԱՐԳ»-ը որ տարիներէ ի վեր գոյութիւն ունի Տիթթի մէջ, պիտի չկրկնէ իր անցեալի յայտագիրները Լոս Անճելըսի մէջ, տրուած ըլլալով որ անոնք համայնքային բնոյթ ունին եւ կը պարունակեն տեղական առեւտրական ծանուցումներ», յայտարարեց Պր. Ե. Ազատեանը, աւելցնելով՝ «Լոս



«ՀԱՐԳ» Մշակութային Ռատիօյի նոր մասնաճիւղը Լոս Անճելըսի մէջ, Գալիֆորնիա: Չայնէն աջ, KPCC կայանի տնօրէն Տոքթ. Ճան Կրեկըրի, Հ. Բ. Ը. Միութեան Արեւմտեան Շրջանի վարիչ ֆարտուղար Բարսեղ Գարթալեան եւ «ՀԱՐԳ»-ի ռատիօ յայտագիրներու հիմնադիր եւ վարիչ Երուանդ Ազատեան

Անճելըսի յայտագիրները տարբեր բնոյթ պիտի ունենան եւ պիտի ընդգրկեն հայկական նուրբ դասական երաժշտութիւն եւ հմտալից հարցազրույթներ տարբեր բնագաւառներու պատկանող հոշակաւոր հայերու կեանքէն»:

«ՀԱՐԳ»-ի շաբաթական ռատիօյի յայտագիրները կանոնաւոր կերպով կը ձայնասփոումուին Տիթթի, Միչիկընի, Րէյսի, Ուիսգանսընի, Հայփաքս, Գանատայի, Ֆրեզնօ, Գալիֆոր-

1981-ին, Կեցա՛ցդ Հայ ժողովուրդ

Գրեց ՏՈՒՊՐ. ԿԱՐԱՊԵՏ Յ. ՔԱՑԱԽԵԱՆ

Երջանիկ եղէ՛ք:

Նոր Տարուան մաղթանք՝ մնայուն, անփոփոխ, յաւերժական:

Հազարամեակներէ եկող Հազարամեակներուն գացող: Երջանիկ եղէ՛ք մարդիկ, երկրագունդի բնակիչներ, տիեզերագնացներ, բոլորդ:

Ձեռք բնորոշեր երջանկութեան որակը, քանակը, բընոյթն ու բնագաւառը:

Իւրաքանչիւրս երջանիկ ենք իւրովի:

Ժուժկալ եւ սակաւապէտ թէ անյագ եւ ոչ մէկ բանով գոհացող:

Ինքն իր բախտին հետ մենամարտի ելած թէ իր ճակատագրին հըռ-հնազանդ Համակերպած:

Հայրենիքի հայր վաստկած է իր երջանկութիւնը: Ան թիկնած իր արիւն-քրտինքով կառուցած վաթսուեմեայ հզօր-հաստատուն երկրին կը բարձրացնէ կեանք մը իր պայերուն:

անոնցմէ ժառանգեց հայոց հողը՝ լիացած ազգային մշակոյթով, ներծծուած Ս. Էջմիածնի լոյս հաւատքով, ոռոգուած ազգապաշտպանութեան համար թափուած անոնց սուրբ արիւնով:

կեանք մը իր եւ իր ժամանակակիցներուն:

անոնք այսօր կան կ'ապրին պատմական Հայաստանի վերջին հողակտորին վրայ: մէկ տասներորդը ամբողջին հողացեալ մասունքն ու սրբութիւնը Ամենայն Հայոց, Հայրենիքը Ամենայն Հայոց:

վերջին հողակտոր՝ որ կեանքի ուղեգիր նուաճեց Սարտարապատի ազգամաքառ յաղթանակով:

կեանք մը իր զինուորեալ որդիներուն եւ անոնց բազմազգ եղբայրներուն:

անոնք այսօր խաղաղ ու անձեռնմխելի կը պահեն Հայոց Տան սահմանները, միշտ կազմ ու պատրաստ՝ գիտակից գոհարբութեամբ հայ կեանքը վերադարձնելու Սասունիմ ու Մուշիմ, Վասպուրականիմ ու Կարսիմ, Երզնկայիմ եւ Կարիմիմ:

Սփիւռքահայ, իւր ալ գտնուիս, թէ՛ քաղաքական համոզում ու հաւատք ալ ունենաս, նոր Տարուան առաջին բաժակը բարձրացուր մէկ թէ քեզի ու քուկիներուդ համար՝ այլ նախ եւ առաջ հայաստանաբնակ մեր բոլորներուն եւ եղբայրներուն համար:

Թող անասան պահեն եւ ընդլայնեն մեր պայծենական անունը հողակտորը, հզօրացնեն զայն գիտութեամբ, եւ մշակոյթով, ապրին խաղաղ եւ երջանիկ, թաղուին մեր նախնեաց շիրիմներուն մօտ կողք-կողքի:

Երկրորդ բաժակը բարձրացուր՝ Արեւմտեան Հայաստանի այն հարիւր հազարաւոր մասունք հայերուն, որոնք Տիգրանակերտէն մինչեւ Կարս եւ Սասուն, արդէն վաթսուհինգ տարիներէ ի վեր կտրուած հայութեան մայր զանգուածէն, մշակոյթէն, հաւատքէն եւ լեզուէն, կապանքուած այլազգի հազուատ-կապուտով, հերոսաբար կը շարունակեն պահել իրենց հայր գիտակցութիւնն ու պատկանելիութիւնը: Անոնք՝ ճակատագրի պահապանները մեր հողի անանդին, իրենց անտեսուած գոյութեամբ կը խարանեն սփիւռքի մեղկ, եսամոլ, ինքնակեդրոն կեանքը: Ձեր կեանքը, միմչեւ շուտափոյթ համադիպում մեր տան մէջ իսկ...

Երրորդ բաժակն ալ բարձրացուր մեր կենացը, սփիւռքահայութեան կեանքը — առողջ եւ իմբնագիտակից սփիւռքի մը՝ որ դառնայ եւ հայրենիքիմ հզօր կրտսեր եղբայրը եւ անզիջում պահանջատէրը իր հողայիմ դատիմ:

Մեր զաւակներն ու թոռները դաստիարակենք հայրենիքի անչէլ սիրով: Թող խանդավառուին անոր յաջողութիւններով, թեւաւորուին անոր երգ ու պարով. տեսնեն, այցելեն եւ ապրին հոն իրրեւ Արտամէտի խնամքի երկու հա-

(Շար. էջ 11)

Արուեստագէտների Ընտանիք

Գրեց՝ ՆՈՒՊԱՐ ՏԷՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Մեծ Եղեռնից հրաշքով փրկուած նկարիչ եւ լուսանկարիչ Յովհաննէս Գալուքեանի երկու որդիները եւս հետեւելով իրենց հօր օրինակին դարձան լուսանկարիչներ: Կրտսերը՝ Յարութիւնը, որ աշխարհին ծանօթ է Արթօ Գալուքեանով, տասը տարեկանից սկսած ուսից կախած է լուսանկարչական գործիքը եւ որպէս միակ զէնք յաղթանակի հետն է տանում երկրից երկիր: Այս հասարակ գործիքը մեծ փառք ու պատիւ է բերել արուեստագէտ տիրոջը, որ այսօր իրօք դարձել է աշխարհահռչակ մի դէմք, շնորհիւ իր արուեստին ու ստեղծագործական տաղանդին:

Վարպետ լուսանկարիչ Արթօ Գալուքեանը, այս համեստ բնավորութեան ու ազնիւ նկարագրի տէր մարդը, այսօր հասել է համաշխարհային համբաւի, շնորհիւ կտաւի վրայ իր ստեղծած գունաւոր լուսանկարներին: Ժողովրդական հասարակ մարդկանց հետ նա լուսանկարել է նաեւ աշխարհի մեծամեծներին, չփուել նրանց հետ, հայ ժողովրդի պատիւը միշտ բարձր պահելով օտարազգի այդ ղեկավարների մօտ:

Գանատացի յայտնի լըրազրող Լօթա Տեմիսի խօսելով Ա. Գալուքեանի մասին, «Թորոնթօ Սթար» օրաթերթում (15 Սեպտ. 1980), շատ իրաւամբ գրում է, որ մեր հայրենակիցը «աշխարհի ամենահռչակուած լուսանկարիչներից մէկն է»: Նրա մասին գրել են հայ եւ օտար բազմաթիւ թերթեր եւ նրա անունը մտել է Հայկական Սովետական Հանրագիտարանում:

Գալուքեանը պաշտօնական լուսանկարիչն է Գանատայի Ընդհանուր Կառավարիչին, որի հարիւրաւոր գունաւոր նկարներն այսօր զարդարում են արտասահմանում գտնուող հարիւր տասը Գանատական դեսպանատների դահլիճները: Գալուքեան այս մեծ ու պատուաւոր գործը կատարել է Գանատական կառավարութեան յատուկ պատուէրով: Բացի այդ, անցեալ Նոր Տարուան Ընդհ. Կառավարիչի պաշտօնական շնորհաւորական քարտը, թուով վեց

հարիւր, կրել է Կառավարիչի եւ Տիկնոջ գունաւոր նկարը, քաշուած մեր հայրենակցի կողմից: Այս մասին ժամանակին գրել են Գանատական բազմաթիւ թերթեր:

Արթօ Գալուքեանը աւագ որդին՝ Օննիկը եւս, որպէս երրորդ սերունդ, հետեւում է իր արուեստագէտ հօր եւ պապի արուեստին՝ լուսանկարչութեան: Նա եւս մասնագիտացել է գունաւոր լուսանկարչութեան, տիրապետել դրա գաղտնիքներին, արժանաւոր կերպով փոխարինում իր հօրը, այս վերջնոյս Գանատայից բացակայութեան ժամանակ:

Գալուքեանի կրտսեր որդին՝ Բաֆֆին զբաղուում է երգով ու երաժշտութեամբ եւ առաւել մասնագիտացել է մանկական երաժշտութեան մէջ: 3-7 տարեկան երեխաների համար նա գրում է երգեր, յօրինում է երաժշտութիւնը եւ անձամբ էլ երգում դրանք: Մանկական իր ստեղծագործութիւնները նա վերածել է մի շարք երգապնակների, որոնք տարածել են ամբողջ Գանատայում:

Ա. Գալուքեանի միակ դուստրը՝ Անին, հազիւ չորս տարեկան էր, երբ ծնողների հետ Եգիպտոսից տեղափոխուեց Գանատա: Մանկապարտէզից մինչեւ համալսարանական կրթութիւնը ստացել է այստեղ, մասնագիտանալով հոգեբանութեան մէջ:

Փիլիսոփայութեան դոկտորի աստիճանը ստացած Անին այսօր Թորոնթոյի համալսարանի չորրորդ կուրսում հոգեբանութիւն է դասաւանդում, միեւնոյն ժամանակ հանդիսանալով Գանատայի Օնթարիօ մեծ նահագի ընդհանուր դատախազի գրասենեակում խորհրդական, մի բան, որ մեծ պատիւ է Գալուքեան ընտանիքի եւ գանատահայ ամբողջ գաղութի համար:

Վերջում պէտք է յատկապէս նշել, որ արուեստագէտների այս ընտանիքի յաջողութեան, զաւակների եւ մասնաւորապէս երկու թոռնիկների հայեցի կրթութեան, «Սթիւտիօ Գալուքեան» անուանի դառնալու գործում մեծ բաժին ունի այս երեք

(Շար. էջ 9)

ՆՇՄԱՐՆԵՐ

Ելֆ՝ Գարթըր Մուտֆ՝ Ռեկըն

Ամերիկեան ներքին քաղաքականութեան մէջ, չորս տարին անգամ մը, տեղի ունեցող փոփոխութիւնը եւ իշուկին պատերազմը, այս անգամ (աւելի՛ ճիշդ պիտի ըլլայ ըսել՝ երկու քաղաքացիներու մենամարտը), վերջացաւ փետրաբար, անբախտ Գարթըրի «Սպիտակ Տուն»էն ելքով, եւ Ռեկընի սիրամարգային, փառապանծ մուտքով:

Չորս տարի առաջ, այս սիւնակին մէջ նշմարեցինք աշխարհի ժողովուրդներու ակնկալութիւնները, Աստուածավախ, բարի ու պարկեշտ անձի մը յուսատու երեւոյթով Գարթըրի «Սպիտակ Տուն» մուտքին մասին, մտածելով թէ՛ որքան երկար պիտի դիմանար ա՛յդ պաշտօնին վրայ գտնուող անձի մը ա՛յդ համբաւը: Եւ կը շարունակենք մտածել, թէ այսօրուան սիրամարգն ալ, արդեօք չորս տարուան ընթացքին, յաշտ ժողովուրդին պիտի մնա՞յ նոյնը, թէ պիտի կերպարափոխուի... հնդկահաւի մը:

Արդէն, ո՞ր մէկ նախագահը, կամ հաւաքականութեան մը ո՞ր մէկ առաջնորդը թիրախը չէ հանդիսացած իր ժողովուրդի անարդար այպանումներուն, երբ ամբողջովին կը մոռցուին դժուարաւ իրագործուած օգտակար ու լաւ գործերը, եւ անհամեմատօրէն կը խոչորնան չիրականացուած կարգ մը ակնկալութիւններ: Անշուշտ, անաշտ պատմաբանին կը մնայ, երբ «բանը բանից անցած» է, եղելութիւնները իրենց ճիշդ համեմատութիւններուն մէջ ներկայացնելու, եւ Գարթըրի կառավարութեան իրագործումներուն, ինչպէս՝ Փանամայի ջրանցքին երկարամեայ խոչընդոտներով լեցուն համաձայնութեան կատարումին, Եգիպտոսի Իսրայէլեան խաղաղութեան ամրապնդումին, եւայլն, կողքին, իր արժանի կամ անարժան տեղը տալու նաեւ իր պաշտօնավարութեան մինչեւ վերջին ժամը Գարթըրի նուաստացուցիչ մղձաւանջը եղող պատանդներու հարցին:


Ժողովուրդի այս անողորմ վերաբերմունքն է արդեօք

(Շար. էջ 10)

Արշակ Զօպանեան Նամականի

(Գրական ժառանգութիւն, հատոր ԺԳ.)
 Կազմեց ու ծանօթագրեց ԳՈՂԱՐ ԱԶՆԱՒՈՒՐՆԱՆ
 «Սովետական Գրող» Հրատարակչութիւն
 Երևան, 1980, 500 էջ, Զօպանեանի կենդանագրով
 Գրեց ՅՈՒՎԱՆ ՓՎԱՃՆԱՆ
 Փաստօր հաստատութեան

Երկար սպասումէ ետք, լոյս տեսաւ ներկայ հատորը, որ կ'ընդգրկէ 248 նամակ, դասակարգուած ժամանակագրական կարգաւ:



Ան կը սկսի 1886 թուականին, Զօպանեանի «Բուրաստան մանկանց» հանդէսի խմբագրութեան գրած մէկ նամակով եւ կը վերջանայ 1952ին Հ. Բ. Ը. Միտլերի Արեւմտեան Եւրոպայի Շրջանային Վարչութեան յղած գրութեամբ: Նամակներուն վեց հատը ուղղուած են Զօպանեանի հօրը՝ Յովհաննէս Զօպանեանի:

Նամակներու այն մասը, որ կ'արձարծէ արեւմտահայ եւ սփիւռքահայ մշակոյթի տարբեր մարզերու վերաբերեալ հարցեր եւ կարեւոր խնդիրներ անցեալ դարու 90ական թուականներէն մինչեւ 1953:

Երեւանի Գրականութեան եւ Արձուեստի թանգարանը գտնուող Արշակ Զօպանեանի թղթածրարը կը պարունակէ մօտ եօթանասուն հազար վաւերագրեր, որոնց կէսը կը կազմէ նամակագրութիւնը: Հատորը կը պարունակէ նաեւ Զօպանեանի ստեղծագործութեանց ցանկը, Ֆրանսերէն հեղինակութիւններու ցուցակը եւ մամուլի գրացուցակ մը:

Զօպանեանի նամակներուն մէկ մեծ մասը կորուստէ փրկուած է շնորհիւ նոյն այդ նամակներու սեւագրութիւններուն, զորս խնամով պահած է Զօպանեան, այնպէս որ յիշեալին թղթածրարին մէջ կը գտնուին մօտ

չորս հազար երկու հարիւր նամակներու սեւագիր պատճենները եւ մօտ եօթը հարիւր բնագրեր, ուղղուած սփիւռքի մէջ ապրող հայ գրողներու եւ մտաւորականներու:

Նամակներու մեծ մասին կ'ընկերանան ծանօթագրութիւններ, ձեռնհասօրէն գրի առնուած Տիկին Գոհար Ազնաւորեանի կողմէ, Գրականութեան եւ Արձուեստի թանգարանին հմուտ աշխատակցին եւ անխոնջ պրպտողին, որ յաջողած է յաղթահարել մեծ դժուարութիւններ, կարգալ կարենալու համար Զօպանեանի ձեռագիրը, այնպէս որ, «Զօպանեանի խիստ դժուար ընթացքով ձեռագրին պատճառաւ, յատկապէս երբ նամակներու սեւագրութիւնները միայն գոյութիւն ունէին, կ'ըսէ Ազնաւորեան, եւ որոնք քիչ չէին, նախնական ընտրութիւնը կատարելու ժամանակ, անհրաժեշտ եղաւ շուրջ ութ հարիւր նամակի բնագիրը պատրաստել, որոշելու համար այն պատճենները, որոնք պիտի մտնէին հատորին մէջ»: Փարիզ, Ֆրանսա

կը տեսնուի Պալքանեան հարցը ինք իր մէջ լուծել, փակել եւ Ասիական Թուրքիոյ խնդիրը ձգել նոյն վիճակին մէջ: Այդ շատ վնասակար եւ նոյնիսկ վտանգաւոր կրնայ ըլլալ մեզ համար: Պարտուած թուրքն ու քիւրտը աւելի եւս կատաղութեամբ պիտի հալածեն այսուհետեւ հայը: Անհրաժեշտ է որ մենք ջանանք, որպէսզի Պալքանեան հարցին հետ նկատողութեան առնուի նաեւ Ասիական Թուրքիոյ քրիստոնեաներուն եւ մասնաւորապէս հայերուն հարցը:

չահիլն է ի նպաստ թրքահայոց դատին: Եթէ Ռուսը հակառակի, ոչինչ կարելի է ընել թրքահայոց ի նպաստ: Ուրախութեամբ տեսայ, Թիֆլիսի լրագիրներէն, որ ուսահայք այս ճամարտութիւնը ըմբռնեցին եւ լուրջ ջանքեր ըրեր են եւ կ'ընեն ուսու կառավարութեանը մղելու համար, որ գործէ ի նպաստ թրքահայոց, բայց դեռ շատ բան կայ ընելու: Եւ դուք կարող էք մեծ գործ տեսնել այդ ուղղութեամբ:

Ատոր համար, երկու գլխաւոր միջոց կայ ըստ իս. 1) Պալքանեան չորս ազգերու, մասնաւորապէս պուլկարին եւ յոյնին համակրութիւնը շահիլ, եւ խնդրել անոնցմէ, որ իրենք նախաձեռնութիւնն առնեն յառաջիկայ Փօնկիւսին մէջ հայոց հարցը եւս օրակարգի մէջ դնելու. այստեղ մենք հանգանակութիւն բացինք (գաղտնի) Հայոց մէջ՝ ի նպաստ պուլկար, յոյն վրաւորեալներուն, եւ շատ զգացուցան պուլկարներն ու յոյները մեր այս վարմունքէն: Լաւ կ'ըլլար եթէ Բագուէն, Թիֆլիսէն եւ Փեթերպուրկէն ալ, հայեր գումար մը հաւաքելով զրկէին, սիրուն նամակով մը, Պրն. Կիչօֆին եւ Պրն. Վէնիգելոսին. պատերազմին վերջանալէն անմիջապէս յետոյ, մենք դիմում պիտի ընենք պուլկար եւ յոյն կառավարութեանց, եւ յոյս ունինք որ մեր դիմումը լաւ ընդունելութիւն կը գտնէ:

Թրքահայաստանը ամբողջ այժմ Ռուսին զայստեսնը կը սպասէ, Ռուսէն կը յուսայ իր ազատումը: Պէտք է ջանանք որ Ռուսը չուշացնէ թրքահայաստանի մէջ իր մուտքը: Այդ որոշուած բան է. օր մը չէ օր մը պիտի կատարուի. եւրոպական տէրութիւններն ալ սկիզբէն համակերպած են այս ծրագրին. արդ, քանի որ անխուսափելի է այդ, եւ թրքական ռեֆորմին բաղադրամասն ուսական հովանաւորութիւնը անհունապէս նախընտրելի է, մենք պէտք է ջանանք որ շուտ կատարուի այդ մուտքը: Այժմ որ սարսափ կը տիրէ Թրքահայաստանի մէջ եւ ջարդի երկիւղ կայ ամէն օր, ինչո՞ւ Ռուսը գէթ քիչ մը զօրք չմտցնել հոն՝ գոնէ կոտորածի առաջն առնելու համար:

Երկրորդ միջոցը (եւ երկրորդ կ'ըսեմ, բայց այնքան եւ աւելի կարեւոր է այն) Ռուսիոյ համակրութիւնը

Երբ Զեր պատասխանն ըստանամ, աւելի ընդարձակ պիտի գրեմ Զեզի: Հաճեցէք միայն ըսել թէ յաջորդ նամակս ինչ հասցէով Զեզ պէտք է ուղղեմ:

Յարգանքներս հաճեցէք մատուցանել տիկին Պապաջանեանին:

Սիրով կը բարեւեմ Զեզ, Զերդ Ա. ԶՕՊԱՆԵԱՆ

Ստորեւ մեր ընթերցողներուն կը ներկայացնեմք նմոյշ մը, Ա. Զօպանեանի նամակներէն:

ՄԻՔԱՅԷԼ ՊԱՊԱՋԱՆԵԱՆԻՆ
 (Թիֆլիզ)

1912, Նոյեմբեր 12, Փարիզ

Սիրելի Պրն. Պապաջանեան,

ազգային դատին. բայց եթէ թրքահայոց կարեւոր խմբակցութիւն մը Զեզ յանձնէ այդպիսի պաշտօն մը, Զեր դիրքը ատով աւելի՛ եւս ուժեղ եւ հեղինակաւոր կը դառնայ այդ դերը կատարելու համար: Կը յուսամ որ առաջարկս կ'ընդունին, եւ իրենցմէ կը ստանաք նամակըս: Եթէ տակաւին չէք մեկնած Փեթերպուրկ, թերեւս կարողանաք նախ անցնիլ Էջմիածին, տեսակցել Հայրապետին հետ, Թիֆլիսի հայութեան գլխաւոր դէմքերուն հետ խորհրդակցելով եւ յետոյ երթալ փեթերպուրկ:

Էջմիածին եւ Փեթերպուրկ՝ թրքահայոց խնդրոյն համար աշխատելու: Իմ առողջութիւնս այժմ լաւ է, բայց դեռ ի վիճակի չեմ այդքան երկար եւ յոգնեցուցիչ ճամբորդութիւն մը ընելու. ատկից գտա, այստեղ շատ բան կայ ընելու, եւ կրցածս ընելու վրայ եմ. ներկայութիւնս այստեղ հարկաւոր է, իսկոյն գրեցի Եգիպտոսի բարեկամներուն եւ առաջարկեցի որ Զեզ յանձնեն այդ պաշտօնը: Անշուշտ, դուք, նոյնիսկ եթէ Եգիպտոսի հայերը Զեզի այդպիսի պաշտօն մը չյանձնեն, արդէն պիտի ընէք Փեթերպուրկի մէջ ինչ որ կրնաք ի նպաստ թրքահայոց դատին, այսինքն մեր

Պատմական ամենամեծ ըրպէի մը մէջ ենք: Ամէն ջանք պարտաւոր ենք թափել, որպէսզի մեր ազգային դատին համար օգուտ մը, արդիւնք մը քաղենք այս ըրպէէն:

Դժբախտաբար, Եւրոպայի մէջ ընդհանուր ձգտում մը

HEBDOMADAIRE ABAKA WEEKLY

Publié par le Centre de Publication Tékeyan / Published by the Tekeyan Publication Center

Tous les samedis sauf deux semaines en juillet / Every Saturday except two weeks during July

663 rue JARRY OUEST, MONTREAL P.Q. Canada / Tél.: (514) 273-0855 H3N 1G3 CANADA

Abonnement annuel / U.S. \$20:00 / U.S.A. Annual subscription

Etranger: \$25:00 Overseas

Imprimeur Journal Offset Inc. Printer / Dépôt légal deuxième trimestre 1976 / Bibliothèque Nationale du Québec

Courrier deuxième classe: No 3611

Administrateur-Rédacteur: Yervant Papazian - Managing-Editor

ՄՈՆԹՐԷԱԼԱՀԱՅ ԿԵԱՆՔ

«Հայ Բեմ»ը նոր Յաղթանակի Ճամբուն վրայ

Քանի մը ամիսներ է ի վեր, անօրինակ եռուզեռ մը կը տիրէ Թէքէեան Մշակութային Միութեան «Հայ Բեմ» թատերախումբի անդամներուն մօտ: Հեւքոտ աշխատանքի մը լծուած են անոնք ու հանապազօրեայ թատերական փորձերով կը ճգնին կատարեալին մօտեցնել իրենց խաղարկութիւնը:

Պատճառը «Ապագայ»ի ընթերցողները արդէն նախորդ թիւով ծանօթացան իրողութեան եւ կամ՝ նախօրօք իրենց իմացած լուրը ստուգեցին: Գաղութիւս մէջ խօսակցութեան նիւթ դարձած է այդ աննախընթաց իրողութիւնը: «Հայ Բեմ»ը Անգլիա կը մեկնի ներկայացումներու շարք մը տալու համար Լոնտոնի մէջ՝ հրաւիրով տեղւոյն Թէքէեան Մշակութային Միութեան:

Իրօք աննախընթաց երեւոյթ մըն է սա, սփիւռքի մեր ներկայ իրականութեան մէջ: Աննախընթաց է նաեւ, երբ նկատի կ'ունենաք սփիւռքի անցեալ շրջանի քանի մը տասնամեակներու թատերական կեանքի պատմութիւնը: Նոյնիսկ լաւագոյն դերասաններու շրջանին, զանազան հայահոծ կեդրոններու մէջ՝ տարբեր շրջաններու, գոյութիւն առին սիրողներէ բաղկացած թատերախումբեր, որոնք իրենց ամենափայլուն շրջաններուն իսկ՝ թերեւս մէկ կամ երկու բացառութեամբ, մնացին տեղական խումբեր ու գործեցին իրենց քաղաքին մէջ:

Տեղւոյս «Թէքէեան»ն ալ իր հիմնադրութեան առաջին օրէն իսկ ձեռնարկեց թատե-

ղիստես, սկեպտիկ էին արդիւնքին նկատմամբ: Սակայն, առաջին ներկայացումն իսկ եկաւ փաստելու թէ՛ հիմնովին յեղաշրջուած նոր ըմբռնում մը ու



Թատերախումբը Անգլիա մեկնելէ առաջ քծախնդրօրէն կը փորձէ իր թատերախաղերը

րախումբի մը կազմութեան, որ իր վերջնական ու արւեստի գծով բարձորակ չափանիշին՝ հասաւ դերասան-բեմադրիչ Պերճ Փազլեանի շնորհիւ՝ հինգ տարիներ առաջ:

Նոր ըմբռնումով թատերախումբի վերակազմութեան առաջին օրերուն, բոլորն ալ՝ խաղացող թէ՛ հան-

թատերական հասկացողութեան տարբեր մակարդակ մըն էր որ կը հրամցուէր ժողովուրդին: Յաջողական ներկայացումները անցնող հինգ տարիներու ընթացքին, յուսախաբ չըրին ժողովուրդը, որուն մօտ արագօրէն աւելցաւ թատերախումբին հմայքը. ու այսօր արուեստասէր ժողովուրդը առանց դոյզն վարանումի կը յայտնէ իր անվերապահ գնահատանքը տարուող աշխատանքին ու բարձորակ արդիւնքին նկատմամբ:

Իսկապէս, լուրջ եւ խրդճամիտ, յաճախ ծանր կը շող աշխատանքի արդիւնքն են «Հայ Բեմ»ի այնքան գնահատուած ներկայացումները: Պերճ Փազլեանի դեկավարութեամբ տարուող փրոֆէսիոնէլ մակարդակի աշխատանքն է որ իրագործած է վերջին հինգ տարիներու թատերական յաղթանակները, որոնց արձագանքը այլեւս սկսած է հնչել մինչեւ Ամերիկայի հեռուոր փիերը, մինչեւ Եւրոպա ու Միջին Արեւելք: Ատոր փաստը, այն հրաւիրն է գոր Լոնտոնի Թէքէեան Մշակու-

(Շար. էջ 11)

Արտասանական Մրցանք Զօնուած Հ.Բ.Ը.Մ.-ի 75-Ամեակին

Կիրակի, Յունուար 18-ին, Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան Ալեք Մանուկեան Կեդրոնի վահարամ Սուքիաս սրահին մէջ, Հայ մանուկներու եւ երիտասարդներու հոյլ մը, կը պարզէին Հայերէն ասունքի նուիրուած մրցանքի խանդավառ եւ յուսադրիչ պատկեր մը: Արդարեւ, Միութեան Սկաուտական Վերին Մարմնի, Մնողաց Յանձնախումբի կազմակերպութեամբ տեղի կ'ունենար Հ.Բ.Ը.Մ.-ի հիմնադրութեան 75-ամեակի տօնակատարութեանց շարքին առաջին ձեռնարկներէն մին, մասնակցութեամբ Ալեք Մանուկեան վարժարանի, Թէքէեան Մշակ. Միութեան եւ Պարոյր Սեւակ Մշակ. Միութեան:

Մնողաց Յանձնախումբի

եանը, Գէորգ Էմինն ու Խ. Դաշտենցը այնքան հարազատօրէն վերարտադրուած, այս մատաղ շրթներէն: Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան հայկական վարժարանին բարիքներն էին անոնք...

Արտասանութեան մրցանքին երկրորդ մասը յատկացուած էր երէցներուն: Գաղութը բախտաւոր է ունենալու տասնեակ մը երիտասարդուհիներ, որոնք գիտցան խորաթափանց կերպով մեկնաբանել Պարոյր Սեւակն ու վահար Թէքէեանը, Դանիէլ վարուժանը, Յովհաննէս Շիրազը եւ Յակոբ Պարոնեանը գիտակից ապրումով անոնք կրցան հաղորդական դառնալ եւ մազնիսացած պահել մթնոլորտը:

Մինչ դատական կազմը իր որոշումները կ'առնէր, Սկա-



Արտասանական մրցանքին դատական կազմի անդամները կ'երեւին Մասնաճիւղի Ատենապետին շուրջ: Նստած ձախէն աջ.- Պրն. Մկրտիչ Ղազարեան, Տոբ. Յարութիւն Էսէկիւեան, Տիկ. Վարդուհի Պալեան եւ Տիկ. Սելմա Բէլիկեան: Ոտքի ձախէն աջ.- Պրն. Վահան Շափարեան, Պրն. Սարգիս Սարգիսեան եւ Տոբ. Յովհաննէս Պալապանեան

ատենադպիր՝ Պրն. Վահան Շափարեան բարի գալուստի ջերմ խօսքերով ողջունեց ներկաները, ներկայացուց մասնակցող կազմակերպութիւններն ու օրուան դատական կազմը: Ապա, լուսապատկերներով ցոյց տուաւ բանաստեղծներու մեծադիր նկարները:

Իննէն-տասներեք տարեկան կրտսերներու իրեր-յաջորդ արտասանութիւնները սկսան հետօրէն թափանցել ներկաներու հոգիներէն ներս, որոնց վարմունքն ու հրացումը արդար էր, երբ կը տողանցէին Յ. Թումանեանն ու Վ. Թէքէ-

ուտական Վերին Մարմնի ատենապետ Պրն. Վարուժան Թաշճեան շնորհակալութիւն կը յայտնէր Մասնաճիւղի վարչութեան եւ Մնողաց Յանձնախումբին, որոնք միշտ զօրավիգ կը կանգնէին իրենց աշխատանքներուն:

Անհամբեր սպասուած պահը հասած էր: ՀԲԸՄ-ի Մոնթրէալի Մասնաճիւղի կորովի ատենապետ՝ Տոբ. Յովհ. Պալապանեան բեմ բարձրացաւ եւ կուռ խօսքերով արտայայտուեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի Միութեան համաշխարհային տարողութեան

(Շար. էջ 10)



Զգեստները կը տեղաւորուին սնտուկներու մէջ

abaka

AVENIR

SAMEDI 31 JANVIER 1981


SUPPLÉMENT EN FRANÇAIS

Autour de nous

INITIATIVES NOUVELLES ET APPREHENSIONS

Gérald Godin participe à l'inauguration de la campagne «Mes Amis de Partout»

Le ministre de l'Immigration du Québec, M. Gérald Godin, a inauguré le mardi 13 janvier, en compagnie de son collègue responsable de l'Éducation, le Dr. Camille Laurin, la campagne *Mes Amis de Partout*, visant à sensibiliser les jeunes des écoles maternelles et primaires du Québec à la



M. Gérald Godin

diversité culturelle de la société québécoise, en permettant à chaque classe de manifester, par une création artistique collective, son appréciation pour la contribution d'un ou de plusieurs

groupes culturels au patrimoine collectif.

Evoquant les efforts consacrés par le gouvernement depuis quatre ans dans le sens de l'intégration des immigrants et de la prise de conscience par les Québécois, M. Godin a mentionné en particulier les colloques organisés par son ministère et par le ministre d'État au Développement culturel, qui regroupèrent à chaque fois des centaines de participants de tous les groupes ethniques: la Semaine du Rapprochement des COFI; le programme québécois de parrainage qui implique des milliers de citoyens de plus de deux cents villes et villages du Québec dans l'accueil des réfugiés, de même que la programmation de Radio-Québec consacrée aux minorités, et le programme d'enseignement des langues d'origine du Ministère de l'Éducation.

La campagne *Mes Amis de Partout* vise le milieu scolaire, a déclaré le ministre, parce que c'est là que se forment les citoyens de l'avenir. «Mais il y a aussi une autre dimension de l'action de l'école que je veux



«Mes Amis de Partout»

souligner ici, a-t-il ajouté: il s'agit de son impact sur les parents eux-mêmes.

Au contact d'immigrants qui ont des enfants d'âge scolaire, j'ai souvent constaté, de poursuivre M. Godin, que c'est par l'intermédiaire de ces derniers que beaucoup de parents prennent leur premier contact avec



M. Camille Laurin

toute une partie de l'héritage culturel traditionnel québécois.

Les textes de notre littérature, les passages de notre histoire nationale qu'ils lisent avec leurs petits pour les aider à faire leurs devoirs ou les chansons de notre folklore et les autres éléments de notre réalité culturelle que les enfants ramènent à la maison, sont autant d'occasions pour les parents de mieux comprendre notre société, sa genèse et ses aspirations.

Il est à souhaiter que ce rapprochement ne se fasse pas à sens unique et que les apports de tous nos groupes ethniques au patrimoine commun, soient mieux compris de nos concitoyens québécois de vieille souche.»

Le ministre s'est déclaré convaincu que «cette appréciation de nos diverses richesses est en bonne voie de se réaliser, surtout depuis que celles-ci, jour après jour, deviennent de plus en plus accessibles à tous par l'usage d'une langue commune.» On ne soulignera d'ailleurs jamais assez l'importance de ce dernier acquis pour notre société, a poursuivi M. Godin, en souhaitant qu'«il ne sera plus jamais remis en question».

L'opération *Mes Amis de Partout* devrait donc permettre non seulement aux enfants, mais indirectement aussi à leurs parents, de prendre conscience de l'apport des diverses commu-

Suite page 6

En Arménie et ailleurs...

A LA TELEVISION FRANCAISE

Un film de long métrage ayant pour principal protagoniste l'acteur de cinéma Jean-Paul Belmondo, a été diffusé sur la première chaîne de la télévision française, le 21 décembre der-

nier.

Le scénario de ce film est tiré d'un grand roman policier «L'Incorrigible», qui est l'oeuvre de l'écrivain d'origine arménienne Alex Varoujan (Varoujan Alkexanian).

LES DECOUVERTES DES ASTROPHYSICIENS ARMÉNIENS

L'observatoire astrophysique de Burakan est situé sur une pente du mont Aragats non loin d'Érévan, capitale de la RSS d'Arménie. Il jouit d'une renommée mondiale. Le correspondant de l'APN Guéorgui Sarkissian parle des recherches effectuées par les scientifiques de l'observatoire.

Les astrophysiciens de Burakan dirigés par l'académicien Victor Ambartsumian étudient les lois relatives à la structure des galaxies, à l'origine et au développement des étoiles et de leurs systèmes. Les savants examinent notamment les étoiles éruptives, instables (chaudes) et hyperdenses, effectuent des observations radioastronomiques.

Pendant les premières années d'activité de l'observatoire - il fut ouvert en 1946 - les résultats les plus importants ont été obtenus dans l'étude des problèmes théoriques, notamment la nouvelle théorie de la dispersion de la lumière et les recherches relatives à l'astronomie stellaire. Cela a permis de découvrir dans les galaxies un nouveau type de systèmes stellaires, les *associations stellaires*.

On sait depuis longtemps déjà que dans la galaxie, outre les étoiles isolées, il y a aussi des amas stellaires composés de quelques dizaines et même de quelques centaines et milliers d'étoiles. Il existe également des amas plus grands. Victor Ambartsumian et son élève Benjamin Markarian ont établi en 1947 qu'outre les amas globulaires et ouverts, il y a dans la galaxie des groupes très dispersés de ces corps célestes.

Se basant sur de nombreuses observations et sur des calculs théoriques, Victor Ambartsumian a déterminé l'âge de différents systèmes stellaires qui font partie de la galaxie, a découvert l'existence des systèmes stellaires très jeunes auxquels il a donné le

nom d'«associations stellaires». Le savant a tiré la conclusion que la formation des étoiles continue.

— Ces dernières années les chercheurs de l'observatoire de Burakan ont apporté une grande contribution à l'astrophysique, dit le professeur Ludvig Mirzoian, directeur adjoint de l'observatoire. On a obtenu par exemple de nouvelles preuves importantes qui confirment la supposition relative à l'activité des noyaux des nébuleuses.

Benjamin Markarian, membre-correspondant de l'Académie des sciences d'Arménie, a notamment découvert plus de 300 galaxies à radiation ultra-violette très forte due à l'activité de ses noyaux. Il s'est avéré que les galaxies découvertes par Markarian occupent par leurs particularités - une place intermédiaire entre les galaxies ordinaires et les quasars. Ces derniers se distinguent des galaxies par des dimensions moins grandes, un fort rayonnement hertzien et des particularités du spectre.

L'étude statistique des quasars effectués par l'astrophysicien arménien Arakélian revêt une grande importance. Cette étude montre que, comme on le supposait, les quasars se trouvent à des distances colossales et que la disposition spécifique des lignes dans leurs spectres est la conséquence de très grandes vitesses de déplacement.

A l'observatoire de Burakan on a obtenu aussi des résultats précieux dans la recherche des particularités du rayonnement des jeunes

Suite page 6

INITIATIVES...

Suite de la p.5

nautés au trésor culturel québécois. Le ministre encourage donc les parents, de vieille comme de nouvelle souche, à y apporter leur plus active collaboration.

La rencontre avec le ministre Jacques-Yvan Morin



Dans un autre ordre d'idées, le ministre d'Etat au Développement culturel et scientifique, rencontrait les journalistes de la presse ethnique dans les salons de l'hôtel Windsor le vendredi 5 décembre dernier, à propos du brûlant sujet d'actualité, le rapatriement de la constitution, qui, depuis quelques mois anime et agite les milieux politiques ainsi que l'opinion publique.

C'est dans le cadre de la tournée ministérielle d'information sur cette question que le ministre avait tenu à exposer la position du gouvernement du Québec face au projet de rapatriement du gouvernement fédéral et ses conséquences prévisibles pour les communautés culturelles - dites ethniques - au Québec, qui constituent un facteur non-négligeable de l'échiquier politique au Québec.

Avec une verve et un verbe incisif et sans détours, le ministre s'est élevé, avec force explications, contre la Charte des droits et l'amendement constitutionnel tels que projetés, pour en venir à la loi 101.

Sur ce point précis, le ministre a souligné que la Charte des droits telle que libellée créerait deux classes d'immigrants, parce que ceux qui auraient la langue anglaise comme langue maternelle auraient le privilège d'envoyer leurs enfants à une autre école que celle de la majorité. Cette Charte

M. GEORGES ZAKARIAN AU CONSEIL CONSULTATIF

Abaka est heureux d'apprendre la nomination par le Conseil des ministres du gouvernement du Québec de M. Georges Zakarian comme membre du Conseil consultatif de l'Immigration du Québec.

Nous présentons nos plus vives félicitations à notre très sympathique compatriote pour cette marque d'estime et lui souhaitons pleine réussite dans sa nouvelle tâche au service des immigrants.

SIX MINES D'OR EN EXPLOITATION

En escomptant sur la montée graduelle du prix de l'or, la Société québécoise d'exploitation minière (SOQUEM) entend exploiter au cours des prochaines années, six mines d'or et construire une raffinerie, afin de commercialiser le métal précieux.

Déjà SOQUEM, qui relève de l'autorité du ministre de l'Energie et des Ressources, Yves Bérubé, exploite avec Silver Stack, la mine Doyon dans le nord-ouest québécois, et anticipe des revenus annuels de \$75 millions.

Seront mises en production, à compter de 1981, et au cours des années, les mines Mautoban, Aiguebelle, Chimo et Hosco, si les projets de SOQUEM se réalisent.

LA FREQUENTATION DES ECOLES AU QUEBEC

En 1979-80, 1.398.797 élèves ont fréquenté les écoles et les cégeps du Québec.

Dans le réseau public qui comprend les commissions scolaires, les écoles gouvernementales, les établissements associés et les cégeps, les classes d'accueil recevaient 7.691 élèves.



des droits, dans sa rédaction actuelle, ne manquerait pas d'avoir des retombées graves pour le Québec, tout en risquant de compromettre la paix linguistique et sociale qui prévaut depuis l'adoption de la Charte du français au Québec.

Poésie

DE L'ARMENIE, MA TRES DOUCE

De l'Arménie, ma très douce, j'aime le don au soleil doré, De notre antique viole d'amour j'aime le son triste, Des fleurs rouges et des roses, couleur de sang, Et des filles de Nairie, j'aime la danse agile, active.

Et j'aime aussi son ciel bruni, ses eaux claires, son lac Sa forte chaleur, son vent du nord, soufflant, grondant, Les murs noircis, non attrayants, des huttes perdues Et j'aime encor d'antiques cités la vieille pierre empreinte de gloire.

Jamais, jamais, où que je sois, je n'oublierai nos chants Je n'oublierai les beaux livres de nos poètes Saignant, fumant par la souffrance inexprimable de J'aime quand même, orpheline, toute blessée, ma chère

Et pour mon coeur, épris de toi, pas autre conte, joyeux, Comme Narek, comme Koutchak, pas autre front Parcoutez donc les continents, pas un sommet comme Chemin de gloire inaccessible, le mont Massis, mon

Traduit par Krikor Afarian Watertown, Mass. U.S.A.

Yéghiché Tcharentz (1897-1937)

Notes du traducteur:

Yéghiché Tcharentz (1897-1937) un des plus grands poètes arméniens modernes. Il a écrit de nombreux poèmes, d'inspiration épique. Il a aussi écrit des poèmes lyriques incomparables dont le plus admiré, surtout par les Arméniens de la diaspora, est «Yesse ime anouche Hayasdani» (De l'Arménie, ma très douce) dont je donne une traduction à l'intention des lecteurs de Abaka. Qu'il me soit permis de signaler que le rythme et l'harmonie des vers du texte original ne sont pas perdus dans la traduction.

Nairie: c'est l'ancienne appellation de l'Arménie. Narek: grand poète mystique arménien du Xe siècle (951-1003). Koutchak: célèbre poète lyrique arménien du XVIIe siècle. Massis: c'est le nom arménien du mont Ararat.

ԵՍ ԻՄ ԱՆՈՅՇ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես իմ անոյշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում, Մեր հին սազի ողբանուագ, լացակումած լարն եմ սիրում, Արմանման ծաղիկների ու վարդերի բոյրը վառման, Ու նարինեան աղջիկների հեզակուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լինը լուսե, Արեւն ամռան ու ձմռան վիշապաձայն բուրբ վսեմ, Մթում կորած խրհիթների անհիւրընկալ պատերը սեւ Ու հնամեայ ֆաղափների հազարամեայ ֆարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ—չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր, Զ'եմ մոռանա աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր, Ինչքան էլ սո՛ւր սիրտս խոցեն արիւնաբալ վերքերը մեր— էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-եարն եմ սիրում:

Իմ կարօտած արտի համար ոչ մի ուրիշ հեփիաք չկայ. Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ցակատ չկայ. Աշխարհն անցիր Արարատի նման ներմակ գագաք չկայ. Ինչպէս անհաս փառքի ցամբայ՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

1920-1921

LES DECOUVERTES...

Suite de la p.5

étoiles. Une grande attention a été notamment accordée aux étoiles éruptives. Leur rayonnement augmente beaucoup de temps en temps (cela se produit parfois en l'espace d'une minute) et diminue de nouveau ensuite. Sur la base de l'étude statistique de ces éruptions il a été montré que le nombre des étoiles éruptives est particulièrement grand dans les associations stellaires et les jeunes amas d'étoiles.

Il s'est avéré notamment que dans l'amas des Pléiades presque toutes les étoiles nains sont éruptives. Cela témoigne de ce qu'après le stade initial d'existence des étoiles nains auxquels des changements continus de brillance sont propres, on voit commencer une période pendant laquelle l'une des particularités de l'étoile réside dans sa capacité de produire des éruptions.

Afin de découvrir et d'étudier les étoiles éruptives dans l'amas des Pléiades, on a effectué, ces dernières années, des observations communes dans le cadre d'un programme commun dans les observatoires de Burakan, de Budapest, de Tohanchintla (Mexique) et d'Asiago (Italie). Cela a permis de découvrir (essentiellement à Burakan et Tohanchintla) plus de 100 nouvelles étoiles éruptives, c'est-à-dire deux fois plus qu'on n'en connaissait auparavant.

La coopération entre les chercheurs de Burakan et leurs collègues étrangers se développe fructueusement dans d'autres domaines aussi. Ces dernières années on a conclu notamment des accords avec les observatoires de la Hongrie et de la RDA sur l'étude des galaxies et des étoiles instables. Les études communes de ces étoiles sont effectuées en coopération avec les observatoires français et mexicains. Des savants des Etats-Unis, d'Angleterre, du Canada, du Japon, d'Italie et d'autres pays travaillent souvent à l'observatoire de Burakan. «Le Bulletin de l'observatoire de Burakan» est envoyé à 315 observatoires, bibliothèques, centres de recherche etc. de 50 pays du monde.

abaka

FUTURE

SATURDAY
JANUARY 31ST 1981

ENGLISH SUPPLEMENT

SUZY MAHSEREDJIAN GETS MILD SENTENCE IN GENEVA COURT

Suzy Mahseredjian, one of the two suspects arrested in Geneva following a bomb explosion in their hotel room, was sentenced after a lengthy trial, to 18 months of prison and fifteen years of inadmissibility to Switzerland.

